Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՀԽ-1 (8)

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2019թ. ապրիլի 23

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), խորհրդի նախագահ Զարուհի Բաթոյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Արաքսիա Սվաջյան	«Արև» երեխայի զարգացման հիմնադրամ
Սառա Ղազարյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ
Միրա Անտոնյան	«Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ
Արտաշես Տոռոզյան	«Գործընկերություն և ուսուցում» ԳՈՒՄ/ՀԿ
Մարինե Համբարձումյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Գոհար Խաչատրյան	«Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ
Անահիտ Գևորգյան	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Քրիստինե Մխիթարյան	«Հայկական կարիտաս» ԲՀԿ
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ մանկական գյուղեր» ԲՀԿ
Աիդա Մուրադյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲՀԿ
Աննա Եղիազարյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ
Գրիգորի Գրիգորյանց	«Սեյվ դը Չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն
Քրիստինե Հովհաննիսյան	«Օքսեջեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ
Աննա Մնացականյան	Ֆիզիկական անձ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն)

Մտից № ԵԱՊՀ/26562-19
06 05 19

Հրավիրված և մասնակցում էին՝

Գեմաֆին Գասպարյան	Նախարարի առաջին տեղակալ
Սմբատ Սահյան	Նախարարի տեղակալ
Ժաննա Անդրեասյան	Նախարարի տեղակալ
Արայիկ Պետրոսյան	Նախարարի խորհրդական
Լաուրա Հարությունյան	Նախարարի ԿՍԱԳՀ խորհրդական
Արթուր Կեսոյան	Նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ
Անահիտ Գևորգյան	Նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ
Արմեն Մարգարյան	Նախարարության սոցիալական աջակցության վարչության նպաստների բաժնի պետ-վարչության պետի տեղակալ
Ժորա Սարգսյան	Նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Անահիտ Մարտիրոսյան	Նախարարության միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետ
Արթուր Եղիազարյան	Նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ
Արտակ Մարկոսյան	Նախարարության ժողովրդագրության բաժնի պետ
Գեղանուշ Գյունաշյան	Նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Գայանե Մանուկյան	Նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էր՝
Խորհրդի անդամ

Էդուարդ Կիակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի երկամյա գործունեության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացում:**
   (Զեկուցող՝ Նախարարի խորհրդական Արայիկ Պետրոսյան)

2. **Տարեցների խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման և այլընտրանքային համայնքային ծառայությունների զարգացման հայեցակարգային ուղղությունների ներկայացում:**

(Զեկուցող՝ ԱՍՀՆ տարեցների հիմնահարցերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ Անահիտ Գևորգյան)

3. Այլ հարցեր

Մինչ Խորհրդի նիստի օրակարգի հարցերին անդրադառնալը՝ Նախագահը ողջունել է Խորհրդի մասնակիցներին, հատակապես նոր ընդգրկված Խորհրդի անդամներին՝ նշելով, որ շատ է կարևորում ձևավորված հարթակի շրջանակներում յուրաքանչյուր անդամի առավել ակտիվ մասնակցությունն սոցիալական ոլորտի խնդիրների բարձրացման և դրանց արդյունավետ լուծման ուղղությամբ իրականացվող, ինչպես նաև միջնաժամկետ ծախսային ծրագրերով նախատեսված (ՄԺԾԾ) միջոցառումների և ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի վերաբերյալ համապարփակ առաջարկությունների ներկայացման աշխատանքները: Միաժամանակ, կարևորելով քննարկումների առավել թափանցիկ և անկեղծ լինելու գաղափարը՝ նշել է, որ Խորհրդի հերթական քննարկումներից բացի հնարավոր է նախատեսել անհատական հանդիպումներ, քննարկել և համատեղ արդյունավետ լուծում գտնել ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ:

Այնուհետև, Նախագահ Զարուհի Բաթոյանն անդրադարձել է նիստի օրակարգին, որի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չեն ներկայացվել և այն հաստատվել է միաձայն:

Օրակարգի 1-ին հարց.
«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի երկամյա գործունեության» ծրագրի ներկայացում:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում՝ նախարարի խորհրդական **Արայիկ Պետրոսյանը** ներկայացրել է, որ Խորհրդի գործունեության Ծրագրի վերաբերյալ առաջարկվել է երկու ձևաչափ՝

1.Ըստ առանձին կոնկրետ միջոցառումների,

2.Ըստ ոլորտների առավել ընդհանրական ձևակերպումներով:

Քննարկումների արդյունքում նախապատվությունը տրվել է երկրորդ ձևաչափին: Նախորդ երկամյա ծրագրով նախատեսված միջոցառումներից բացի նոր Ծրագրում ավելացվել է ևս հինգ նոր ուղղություններ.

1. Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերի ներկայացում և քննարկում խորհրդի նիստերին,
2. Խորհրդի անդամների նախաձեռնությամբ հանրային հնչեղություն ներկայացնող հարցերի օպերատիվ քննարկումներ /արտահերթ նիստեր/ և լուծումների վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում,
3. Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքների ներկայացում,
4. ՀՀ և Արցախի հանրապետությունների միջև համագործակցության հուշագրով նախատեսված գործունեության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում,
5. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

Ներկայացված Ծրագրի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչել են տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

«Հույսի կամուրջ» ՀԿ-ի նախագահ **Սուսաննա Թադևոսյանն** առաջարկել է Ծրագրի աշխատանքի և սոցիալական պաշտպանության համապատասխան ոլորտներում ընդունվելիք իրավական ակտերի նախագծերը խորհրդի հերթական, առանձին դեպքերում՝ արտահերթ նիստերում ներկայացնելու և քննարկելու վերաբերյալ միջոցառման 2-րդ կետում ներառել «առացանց եղանակով» բառը:

Վերը նշված առաջարկի առնչությամբ **Նախագահը** կարևորել է գործընկերներից կարծիքներ ստանալու, առաջարկություններ ներկայացնելու և փոխանցելու նպատակով օգտագործել օնլայն հարթակը **/առցանց եղանակը/**:

Այնուհետև Խորհրդի անդամ **Աիդա Մուրադյանն** առաջարկել է Ծրագրի 6-րդ կետն ամբողջությամբ և 8-րդ կետում ներառված «ըստ անհրաժեշտության» բառերը հանել:

Ներկայացված առաջարկությունը միաձայն ընդունվել է Խորհրդի անդամների կողմից:

Նախարարի կողմից առաջարկվել է որպես առանձին միջոցառում ընդգրկել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ հաղորդումը:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում քննարկման արդյունքում ներկայացված առաջարկություններով և լրացումներով հանդերձ Նախագահը Ծրագիրի նախագիծը դրել է քվեարկության, որն էլ հաստավել է Խորհրդի անդամների կողմից:

Օրակարգի 2-րդ հարց.

Տարեցների խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման և այլընտրանքային համայնքային ծառայությունների զարգացման հայեցակարգային ուղղությունների ներկայացում:

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում տարեցների հիմնահարցերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ **Անահիտ Գևորգյանը** ներկայացրել է, որ տարեցների խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման և այլընտրանքային համայնքային ծառայությունների զարգացման հայեցակարգային ուղղությունների մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.2. գլխի՝ «Աղքատության հաղթահարումը, սոցիալական պաշտպանությունը և ժողովրդագրությունը» դրույթներից: Փաստաթղթի նպատակն է ստեղծել բարենպաստ և առողջ միջավայր տարեց մարդկանց համար: Սույն նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել նաև միջազգային մի քանի փաստաթղթերում ամրագրված դրույթները, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը և նախարարությունը պարտավորություն է ստանձնել իրականացնել այդ դրույթները:

Բանախոսը նշել է նաև, որ ըստ վիճակագրական տվյալների, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչությունը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2 965,1 հազ. մարդ, 63 տարին լրացած անձանց թիվը 328 410 է (որից կին՝ 243 071): Տարիքային կենսաթոշակառուները կազմում են բնակչության ընդհանուր թվաքանակի ավելի քան 11%-ը: Կյանքի միջին տևողությունը 75,4 տարի է (կանանց համար՝ 78,7, տղամարդկանց համար՝ 71,9): Աշխատող տարիքային կենսաթոշակառուների թիվը 47 789 է, կամ նրանց ընդհանուր թվի 14,5 %-ը:

Միաժամանակ հավելել է, որ սույն նախագծով հաստատվող հայեցակարգը նախատեսում է որոշակի գործընթաց տարեցների խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման և նոր համայնքային ծառայությունների ստեղծման ուղղությամբ: Համայնքային ծառայությունների ստեղծումը տարեցներին նյութական աջակցություն, խնամքի ծառայություն տրամադրելուց բացի հնարավորություն է ընձեռնելու վերջիններիս գնահատված կարիքների հիման վրա համայնքներում ապահովել սոցիալական անհատականացված և համաչափ ծառայությունների մատուցումը, որը բնականաբար լինելու է առավել արդյունավետ և տնտեսապես ավելի շահավետ:

Այնուհետև զեկուցողը ներկայացրել է, որ ներկայումս պետության խնամքի ներքո գտնվում է բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամք իրականացնող հինգ հաստատություն, որոնցից 3-ը ընդհանուր տիպի տուն-հաստատություններ են, իսկ 2-ը՝ հատուկ (մասնագիտացված) հաստատություններ են, որոնցում համապատասխանաբար խնամվում են ընդամենը 1210 տարեց և հաշմանդամություն ունեցող անձ:

Նա նշել է նաև, որ ապաինստիտուցիոնալացման առաջին փուլում հատուկ տիպի մասնագիտացված հաստատություններում որևէ փոփոխություն չի կատարվելու, ուստի առաջին քայլը նախատեսվում է իրականացնել ընդհանուր տիպի տուն-ինտերնատներում, որոնցում կարևորվելու է բոլոր խնամվողների կարիքների գնահատումը և այդ իրականացվելու է հետևյալ տեսանկյունից՝

- Ընտանիքների կամ այլ մերձավորների առկայություն, որոնք համաձայն են հոգ տանել տարեցի խնամքի մասին,
- Նախկին բնակավայրում ծառայությունների առկայություն կամ առաջիկայում նախատեսվող ծառայություններ,
- Առաջարկվող այլ ծառայությունների նկատմամբ տարեցի վերաբերմունքի գնահատում (նախասիրություն):

Այնուհետև բանախոսը ներկայացրել է, որ ըստ հայեցակարգի նախատեսվում է յուրաքանչյուր տուն-ինտերնատից խնամվողների առնվազն 5%-ը կամ՝ 32 մարդ կվերադառնա ընտանիք (ի դեպ, ընտանիք ունեցող շահառուները կազմում են շուրջօրյա խնամքի հաստատություններում բնակվողների ավելի քան 50%-ը), առնվազն 10%-ը կօգտվի համայնքային այլընտրանքային ծառայություններից: Ակնկալվում է, որ յուրաքանչյուր տարի առնվազն 3 համայնքում կմատուցվեն այլընտրանքային ծառայություններ՝ նվազագույնը 70 տարեցի: Գործընթացի սկզբնական փուլում այն կվերաբերի միայն շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի հաստատությունների խնամվողներին:

Արդյունքում 5 տարվա ընթացքում ընդհանուր տիպի հաստատություններում բնակվող 640 շահառուից ընտանիք կվերադառնա կամ համայնքային տարբեր ծառայություններից կօգտվի 480 մարդ:

Միաժամանակ ներկայացվել է ըստ մարզերի՝ 01.03.2019թ. դրությամբ շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի հաստատություններ (պետական) 2017-2019թթ. ընդունված տարեցների թվաքանակը, որ սահմանվելու և ներդրվելու է ծառայությունների ֆինանսավորման այլընտրանքային մոդելներ (պետություն-համայնք-մասնավոր-հասարակական կազմակերպություն-շահառու և այլ ձևաչափերով համագործակցության շրջանակներում), զարգանալու և հզորանալու է համայնքի կարողություններն ու ռեսուրսները՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման համատեքստում:

Արդյունքում, առաջիկա հինգ տարվա ընթացքում 250 մարդ օգտվելու է այլընտրանքային համայնքային ծառայություններից:

Օրակարգի երկրորդ հարցի ներկայացումից հետո ևս Խորհրդի անդամների կողմից հնչել են տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

Խորհրդի անդամ **Գրիգորի Գրիգորյանցը** մտահոգություն է հայտնել, թե արդյոք ընտանիք և ժառանգ ունեցող տարեցների կողմից ընտանիք վերադառնալու դեպքում նրանց տրամադրվելու է որևէ սոցիալական աջակցության փաթեթ և ինչքան է կազմելու նախատեսված գումարի չափը:

Հարցին ի պատասխան **Ա.Գևորգյանը** պարզաբանել է, որ ընտանիքի անդամներից որևէ մեկին նվազագույն աշխատավարձի չափով տրամադրվում է գումար, որպեսզի ընտանիքը

կարողանա ապահովել տուն-ինտերնատից ընտանիք վերադարձած տարեցի խնամքը: Միաժամանակ **Գրիգորի Գրիգորյանցը** հարց է բարձրացրել նախատեսված գումարը ընտանիքին միաժամանակյա կամ համապատասխան հաստատությունների կողմից տնտեսված միջոցների հաշվին տարեվերջում տրամադրելու վերաբերյալ:

Ա. Գևորգյանը պարզաբանել է, որ վերոնշյալ հայեցակարգից բխող կարգը մշակելիս անպայման սահմանվելու են չափորոշիչներ, միաժամանակ հետագա խնդիրներից խուսափելու համար հաշվի է առնվելու հնարավոր բոլոր ռիսկերը:

Խորհրդի անդամ **Միրա Անտոնյանը** ներկայացրել է, որ որպես օրինակ ունենալով երեխաների պաշտպանության ոլորտի ապաինստիտուցոնալացման գործընթացի իրականացման վերաբերյալ փորձը, նպատակահարմար է, որ բոլոր թվարկված ծառայությունների համար ներկայացված հայեցակարգային փաստաթղթում կամ մեկ այլ իրավական ակտով ամրագրել նվազագույն չափորոշիչներ:

Նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանն** անդրադարձել է տարեցների համար բարենպաստ և առողջ միջավայրի, արժանապատիվ ծերության ապահովման անհրաժեշտությանը՝ կարևորելով նրանց ակտիվ մասնակցությունը համայնքային կյանքին: Նա նշել է նաև, որ տարեցների կարիքներն անհրաժեշտ է գնահատել սոցիալական ակտիվ դիրքից՝ նրանց ներուժը օգտագործելով մասնակից դարձնել հասարակական կյանքին, ընդգրկել սոցիալական տարբեր ծրագրերում՝ միաժամանակ ապահովելով նրանց ինքնաբավարարվածության զգացումը:

Ամփոփելով նիստի աշխատանքները՝ Նախագահը անդրադարձել է նաև ծրագրերի իրականացմանը զուգահեռ վերահսկողության և մոնիթորինգի մեխանիզմների առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությանը՝ կարևորելով ֆինանսական աջակցությունից զատ տարեցներին հոգեբանական, սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման գործընթացը, ինչպես նաև մեր երկրում առկա սոցիալական կապիտալի, հայկական ավանդույթների՝ որպես լավ ռեսուրսի օգտագործումը:

Նիստի ավարտին որոշում է կայացվել կազմել արձանագրություն և Խորհրդի անդամների հետ համաձայնեցնելով այն ներկայացնել ստորագրման:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Զ.ԲԱԹՈՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**